ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Գյումրի «15 » Փետրվարի 2017թ

ՀՀ ԿԳ «Ընտանիք» ՄՊՍԿ ՊՈԱԿ-ը, որը գործում է կանոնադրության հիման վրա ի դեմս տնօրեն Արթուր Մինասյանի (այսուհետ՝ «Պատվիրատու») մի կողմից և Միսակ Մամիկոնի Գաբոյանը (այսուհետ՝ «Կատարող»), ՆՔ 002323970, տրված՝ 20.02.2014թ, 016-ի կողմից, հասցե՝ ք. Գյումրի, Անի թաղ 11 փողոց, 2 շենք, բն. 19, վար. իրավունք GG000439, մյուս կողմից կնքեցին պայմանագիրը հետևյալի մասին.

6. *Պայմանագրի առարկան*

1.1 Սույն պայմանագրով՝ Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

1.2 Կատարողը նշված ժամանակահատվածում պարտավորվում է մատուցել հետևյալ ծառայությունները (այսուհետ՝ Ծառայություն).

ПА3672м մակնիշի նարնջագույնի 45 SO 644 Պ/Հ ավտոբուսով կատարել «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի կազմակերպած «Բանակը մեր բերդ-ամրոցն է» միջոցառման անցկացման նպատակով «Ընտանիք» ՄՊՍԿ ՊՈԱԿ-ի սաների տեղափոխում հետևյալ երթուղով

1.2.1 Գյումրի-Աշոցք Գյումրի - 1 երթ

1.2.2 Գյումրի-Երազգավորս-Գյումրի – 1 երթ

1.3 Աշխատանքների կատարման ժամկետն է՝ 2017թ փետրվար-մարտ ամիսների ընթացքում:

1.4 Ծառայությունները մատուցված են համարվում Պատվիրատուի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից հանձնման-ընդունման ակտը երկկողմ ստորագրման պահից:

7. *Կողմերի իրավունքներն ու պարտականությունները*

2. *Կատարողն իրավունք ունի՝*

Ծառայությունների արդյունքը պատշաճ և ժամանակին կատարելու դեպքում պահանջել պայմանագրով նախատեսված գումարի վճարումը:

Եթե Պատվիրատուն առանց պայմանագրով սահմանված հիմքերի չի ընդունում ծառայության արդյունքը կամ Պատվիրատուի մեղքով ծառայության կատարումն անհնարին է՝ պահանջել վճարելու փաստացի ծառայության դիմաց:

Ծառայությունները մատուցել պատշաճ որակով:

Ծառայության մատուցման համար նախատեսվող բոլոր ծախսերը (վառելիք, սպասարկման և շահագործման ծախսեր) Կատարողը կատարում է իր սեփական միջոցներով:

Ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով, սույն պայմանագրի 1.2 և 1.3 կետում նշված ժամկետում:

Կատարողը ստանձնած ծառայությունը կատարելու է անձամբ:

Պատվիրատուն իրավունք ունի

Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը:

Մինչև ակտի ստորագրումը՝ ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ Կատարողին վճարելով սահմանված գնի այն մասը, որը համապատասխանում է մինչև պայմանագրի կատարումից Պատվիրատուի հրաժարման մասին տեղեկություն ստանալը:

Պատվիրատուն պարտավոր է՝

Իրեն մատուցված ծառայությունների դիմաց վճարել սույն պայմանագրի 3-րդ կետում նշված գնին համապատասխան:

## 8. Պայմանագրի վճարը և հաշվարկների կարգը

3.1 Պայմանագրի վճարը սահմանվում է

3.1.1. Գյումրի-Աշոցք Գյումրի երթաշրջանի համար 45.000 (քառասունհինգ հազար) ՀՀ դրամ

3.1.2. Գյումրի-Երազգավորս-Գյումրի երթաշրջանի համար 25.000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ

Պայմանագրի գինը ներառում է եկամտային հարկը և դրոշմանիշային վճարը: Պատվիրատուն ծառայության դիմաց վճարում է հանձնման-ընդունման ակտը ստորագրելուց հետո, ՀՀ արժույթով, կանխիկ՝ տասնօրյա ժամկետում: Գնի ցանկացած փոփոխություն կատարվում է Կողմերի փոխադարձ համաձայնությամբ գրավոր կարգով:

## 9. Անհաղթահարելի ուժիազդեցություն (Ֆորս - Մաժոր)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կղմերն ազատվումեն պարտավորությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սուն պայմանագրով պարտավորությունների կատարումը: եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 10. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամն ծագած վեճերըլուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնությու ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

## 6. Եզրափակիչ դրույթներ

6.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն երկկողմ ստորագրելու / հաստատելու պահից:

6.2 Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարվում են գրավոր և երկկողմ ստորագրվում:

6.3 Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Պատվիրատու՝

«Ընտանիք »ՄՊՍԿ ՊՈԱԿ
ՀՎՀՀ 05504412
ք. Գյումրի, Անի թաղ., 11 փող, 5/2
Բանկ - «Զարգացման հայկական բանկ» ԲԲԸ
«Շիրակ» մ/ճ
հհ 18100 04776360300

Տնօրեն

Արթուր Մինասյան ____________
Կ.Տ. ստորագրություն

Կատարող՝

Միսակ Մամիկոնի Գաբոյան
Ք. Գյումրի, Անի թաղ 11 փողոց, 2 շենք, բն. 19
ՆՔ 002323970, տրված՝ 20.02.2014թ, 016-ի կողմից
Սոց քարտ 2901510078

____________
ստորագրություն

Հաստատում եմ՝ ____________________

Տնօրեն՝ Ա. Մինասյան

# 15 ՓԵՏՐՎԱՐԻ 2017 Թ. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱԿՏ

ք. Գյումրի « 28 » փետրվարի 2017թ

Ի կատարումն 15.02.2017թ-ի Պատվիրատուի և Կատարողի միջև կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի Կողմերի միջև կնքվեց սույն հանձնման-ընդունման ակտը, որով Կատարողը հանձնեց, իսկ Պատվիրատուն ընդունեց հետևյալ աշխատանքները.

1.Կատարող՝ Սեյրան Աղաջանյանը տեղեկացնում է, որ 28.02.2017թ. Պատվիրատուի համար կատարել է 15.02.2017թ. պայմանագրի 1.2.1 կետով նախատեսված ծառայությունը:

2.Կատարողը «Բանակը մեր բերդ-ամրոցն է» միջոցառման մասնակցության նպատակով կատարել է «Աշոցք» համայնքի դեռահասների տեղափոխում հետևյալ երթուղով

- Գյումրի-Աշոցք Գյումրի - 1 երթ

Սույն հանձնման-ընդունման ակտով մատուցված ծառայության գումարը կազմում է 45.000 (քառասունհինգ հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ 10980 (տասը հազար ինը հարյուր ութսուն) ՀՀ դրամ եկամտային հարկ և 1000 (մեկ հազար) ՀՀդրամ դրոշմանիշային վճար: Վճարման ենթակա գումարը կազմում է 33020 (երեսուներեք հազար քսան) ՀՀ դրամ:

Սույն աշխատանքը Պատվիրատուն ընդունում է ամբողջությամբ և սույն ակտի 1 կետով նախատեսված աշխատանքը համարում կատարված և հանձնված:

ԸՆԴՈՒՆԵՑ՝

«Ընտանիք» ՄՊՍԿ ՊՈԱԿ
ՀՎՀՀ 05504412
ք. Գյումրի, Անի թաղ., 11 փող, 5/2
Բանկ - «Զարգացման հայկական բանկ» ԲԲԸ
«Շիրակ» մ/ճ
հհ 18100 04776360300
Փոխտնօրեն
Սվետլանա Պետրոսյան

Կ.Տ. ստորագրություն

ՀԱՆՁՆԵՑ՝

Միսակ Մամիկոնի Գաբոյան
Ք. Գյումրի, Անի թաղ 11 փողոց, 2 շենք, բն. 19
ՆՔ 002323970, տրված՝ 20.02.2014թ, 016-ի կողմից
Սոց քարտ 2901510078

ստորագրություն